# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ԱՄ-2019/14**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.01.2019թ. թիվ 26-3/605-19 գրությամբ «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 15.01.2019թ. գրության հիման վրա, 21.01.2019թ. թիվ 26-3/605-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Մասնակիցը 20.12.2018թ. ներկայացրել է հայտ «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՎԶՄԵ1-ԳՀԱՊՁԲ/2019/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով և գնահատող հանձնաժողովի 26.12.2018թ. թիվ 3 արձանագրությամբ ճանաչվել է հաղթող 23 չափաբաժիններից 13-ում: Այնուհետև պատվիրատուն հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ և ստացել պատասխան, համաձայն որի Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն՝ 11 000 ՀՀ դրամի չափով:

Մասնակիցը հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա պարտքն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով (համապատասխան ապացույցը կցվում է):

Մասնակիցը հայտնել է նաև, որ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի համաձայն՝ 20.12.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, այլ ունի գերավճար՝ 192 006 ՀՀ դրամի չափով (տեղեկանքը կցվել է):

«Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում:

«Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն խնդրել է վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/14 ընթացակարգի շրջանակներում 24.01.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>«Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.01.2019թ. գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՁՄԵ1-ԳՀԱՊՁԲ/2019/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3-8-րդ, 10-րդ, 14-րդ, 16-17-րդ, 19-20-րդ և 22-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով, հարցում է ներկայացվել ՀՀ ՊԵԿ: Տրամադրված եզրակացության արդյունքում պարզվել է, որ Մասնակիցն ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/14 ընթացակարգի շրջանակներում 24.01.2019թ. ժամը 10:10-ին նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ԱՄ-2019/14 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2019/14 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՎՁՄԵ1-

ԳՀԱՊՁԲ/2019/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **20.12.2018թ.** հայտ է ներկայացրել «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության կայացված որոշմամբ «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 08.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 11 000 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մասնակցի հայտը մերժվել է:

**5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.01.2019թ. թիվ 26-3/605-19 գրությունը, «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 15.01.2019թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի

գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՎԶՄԵ1-ԳՀԱՊՁԲ/2019/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով **20.12.2018թ.** հայտ է ներկայացրել «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն:

Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության կայացված որոշմամբ «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 08.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 11 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.01.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մասնակցի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.01.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 11 000 դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է Մասնակցի կողմից Ընթացակարգի համապատասխան չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկի (առավելագույն գնային առաջարկը կազմել է 17-րդ չափաբաժնի մասով՝ 598 000 ՀՀ դրամ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մեկ տոկոսի շեմը:

Միևնույն ժամանակ Մասնակիցը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ***20.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Մասնակցի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:***

«Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն ներկայացրել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 12 բաժնի կողմից 18.01.2019թ. տրված թիվ տեղեկանքը, համաձայն որի 20.12.2018թ. դրությամբ Մասնակցի մոտ արձանագրված 11 000 ՀՀ դրամի պարտավորությունը դրոշմանիշային վճարի գծով է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ պետական

եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով 20.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի նշված հանգամանքը հաշվի առնելով, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ն «ՎՁՄԵ1-ԳՀԱՊՁԲ/2019/01» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.01.2019թ. թիվ 26-3/605-19 գրությամբ Վարազդատ Հայրապետյան Բարիսի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**